ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ

Մեր պարբերական մամուլը վերջերս մի քանի անգամ անդրադարձաւ այն հարցի շուրջը, թէ Հոգևոր բարձր իշխանութիւնը շատ անտարբեր է դէպի մեր հոգևոր դրպրանոցներից աւարտող սաների բարոյական շահերը, միջոցներ չէ ձեռք առնում օժանդակելու նոցա առաջ Ռուսական համալսարանների դռները բանալու, և խորհուրդ է տալիս անմիջապէս միջոցներ ձեռք առնել մեր կեանքի այդ բացը լրացնելու։

Թէ որքան արդարացի են այդ նկատողութիւնները կերևայ ստորև առաջ բերած պաշտօնական տեղեկութիւններից։

Ռուս սեմինարիստների առաջ համալսարանի որոշ մասնաճիւղերի ուսանողութեան անցնելու դիւրութիւնը տրուելուց յետոյ մի որոշ հոսանք սկսուեցաւ և մեր թեմական դպրոցաւարտների նկատմամբ, նպատակ ունենալով նոյն դիւրութիւնները և նոցա համար ձեռք բերել։

Եւ այս վերջին հոսանքի նախաձեռնութիւնը պատկանում է հոգևոր իշխանութեան։

Ն. Նախիջևանի Հոգևոր Դպրանոցի Հոգաբարձութիւնը, յանձին իւր տեսչի, 1907 թուի նոյեմբ. 13-ին, դիմում է Լուսաւորութեան Տ. Նախարարին մի մանրամասն պատճառաբանած գրութեամբ, խնդրելով իւր դպրանոցի սաների համար դիւրութիւն ռուսական համալսարանները մտնելու համար։

1915 թ. յունիս 15-ին Ն. Նախիջևանի թեմ. Առաջնորդը, դիմում է Ն. Սրբութեան, խնդրելով Նորա առանձին ուշադրութիւնը իւր թեմի դպրանոցաւարտ սաներին համալսարան մտնելու դիւրութիւններ ձեռք բերելու համար, հետը ներկայացնելով և այն պատճառաբանած յայտարարութիւնը թեմ. դպրոցի հոգաբարձութեան, որ վերջինս ուղղել էր իրեն 1915 թ. մայիս 24-ին։

Խնդիրը դրուած լինելով եզական տեսակէտից, Հոգևոր բարձր իշխանութիւնն աւելի յարմար է համարում ընդհանրացնել դիմումը բոլոր թեմական դպրանոցն աւարտածների համար և ոչ միայն մասնաւորապէս Ն. Նախիջևանի թեմ. դպրանոցի սաների համար այդպիսի արտօնութիւն ձեռք բերել։ Այդ եզրակացութեան էր յանգած Ս. Էջմիածնի 1915 թ. յունիս 25-ի խորհուրդը։ Այդ տրամադրութեամբ և կազմուում է որոշ հիմունքներով գրութիւն, որ և նախապէս պէտք է ուղարկուէր բոլոր թեմական դպրոցների վարչութիւններին, նոցա տեսակէտն ու կարծիքներն ևս լսելու համար։

Մինչ այդ հանգամանքներն այնպէս են ընթանում, որ սեպտ. 15-ին ստացած մի հեռագրական-տեղեկութիւն բարւոք է համարել տալիս «առ այժմ միայն Ն. Նախիջևանի դպրանոցի համար կատարել դիմումը», մինչև առաւել յաջող պայմաններ ներկայանալը։

Նոյեմբերի 6-ին տեղի ունեցած երկրորդ խորհրդաժողովն այդ նկատմամբ, Էջմիածնում, ձայների առաւելութեամբ գալիս է այն եզրակացութեան, որ դիմումը պէտք է «կատարել բոլոր թեմական դպրոցների համար այժմենից», ուստի և թեմական դպրոցների հոգաբարձութիւններին ուղարկուելիք գրութիւնն ուղղել նոցա՝ իրենց եզրակացութիւնը լսելու համար։

Ն. Նախիջևանի փոխանորդը, 1915 թ. նոյեմբ. 19-ի գրութեամբ, առաջ է բերում փաստական և իրաւական հիմունքներով մի գրութիւն, կրկին Ն. Նախիջևանի Թեմական Դպրանոցի համար դիմելու «նախապէս, ապա և միւս դպրոցների համար»։

Պետական Դումայի անդամներ մեծ. պ. պ. Միք. Պապաջանեան և Մ. Աջէմեան, 1915 սեպտ. 16 մի նամակով, յանուն Ն. Սրբութեան, խնդրում են դիմումը կատարել «ի սեղբանէ միայն Նոր-Նախիջևանի դպրոցն աւարտողների համար», որպիսի իրաւունքն ստանալուց յետոյ «դիւրին կլինի նաև մնացած թեմական դպրանոցների համար նոյն իրաւունքը խնդրել»։

Այս նկատումներով յանձնարարուում է պ. պ. Աջեմեանին և Պապաջանեանին կարևոր նախապատրաստական դիմումներ անել, ուր պէտք է։— 1916 ապրիլ 30-ին պ. Աջեմեան յայտնում է, որ «հանգամանքները այնպէս դասաւորուեցան, որ ցարդ անկարելի եղաւ այդ առթիւ բոլոր հնարաւոր դռները բաղխել... սակայն յոյս ունիմ, որ մօտ ապագայում հնարաւոր կլինի...»։

1916, մայիս 10-ին յանձնարարուում է Ն. Նախիջևանի փոխանորդ Տ. Գէորգ վարդապետին և Մ. Աջէմեանին «միջնորդութիւն յարուցանել Ն. Նախիջևանի թեմական դպրանոցի համար» և եթէ բարեյաջող կնկատուի «նաև միւս բոլոր դպրանոցների համար» նոցա աներին համալսարան ընդունելու համար։

Տ. Գէորգ վարդապետը յունիս 8-ին տեղեկութիւն է հաղորդում իւր և պ. Աճէմեանի կատարածի, թէ ինչ դիմումներ են արած Լուսաւորութեան Տ. Նախարարին իրենց յանձնարարած գործի մասին, յղելով և այն գրաւոր զեկուցագիր խնդիրը, որով խնդրել են ընդունել Ն. Նախիջևանի դպրանոցից աւարտողներին համալսարան։

Ահա համառօտակի ուրուագիծն այն քայլերի, դիմումների, որ Հոգևոր իշխանութիւնը կատարել է իւր առաջ դրուած խնդիրը լուծելու համար և որի լուծման մասին մինչև այսօր ստացած տեղեկութիւնները ելքի նկատմամբ, առ այժմ, յոռետես լինելու առիթ չեն տալիս։

Այս բոլորից պարզ է, որ լրագրական նկատողութիւնները Հոգևոր բարձր իշխանութեան անտարբերութեան մասին՝ առնուազը ոչ մի հիմք չունին, եթէ չասենք, որ ցանկալի էր նախ տեղեկանալ գործի ընթացքին և ապա դատափետելու դիմել։ Էջմիածինը, ինչպէս տեսնում ենք, շատ աւելի կանուխ է մտածել այդ խնդիրների և նոցա ցանկալի լուծման մասին, քան մեր լրագրական տեղեկատուներն են զարթնել և պարբերական մամուլը անդրադարձել է այդ խնդրին։

* *
*

Եկեղեցական-ծխական կարօտաւոր դպրոցներին Մ. Աթոռի հովանաւորութեան տակ գտնուած դպրոցական դրամագլխի տոկոսները մասնադրելու գործը դիւրացնելու և աւելի կանոնաւոր հիմքերի վերայ դնելու համար բարւոք համարուեցաւ որոշ փոփոխութիւններ մտցնել բաշխման եղանակի մէջ։

Մինչև այժմ այդ բաշխումը կատարւում էր հոգաբարձութիւնների, համայնքի, առաջնորդի մասնաւոր կամ պաշտօնական առանձնական դիմումների հիման վերայ և նայելով, թէ ունեցած տոկոսներից որչափ գումար էր մնում, ըստ այնմ և առաւել կամ պակաս չափով օգնութիւն էր տրւում դպրոցին։

Ի նկատի ունենալով բաշխման այդ եղանակի ոչ ցանկալի կողմը, որով օգտւում էր առաւելապէս այն դպրոցը, որ նպաստի միջնորդութիւնն աւելի կանուխ էր յարուցել, և կամենալով, որ նպաստն իրօք տրուի կարօտաւոր դըպրոցներին, Հայրապետական Դիւանը այս ուսումնական տարուայ վերջը դիմեց բոլոր թեմական առաջնորդներին խնդրելով ներկայացնել իրենց թեմերի ամենից աւելի կարօտաւոր դպրոցների ցուցակը և կարօտութեան չափը. ըստ իրենց հայեցողութեան, իբրև գործին անմիջապէս մօտ եղած դիտողներ։

Թեմակալ առաջնորդների կողմից ներկայացրած ցուցակն այս պատկերն ստացաւ.

1) Երևանի	թեմը 70	դպրոցի	խնդրում էր	11,850 ր.	նպստ.
2) Ղարաբաղի	» 26	»	»	3,250 ր.	»
3) Վրաստանի	» 19	»	»	2,050 ր.	»
4) Աստրախանի	» 12	»	»	1,200 ր.	»
5) Բեսարաբիայի	» 6	»	»	400 ր.	»
6) Շամախու	» 5	»	»	1,250 ր.	»
Ընդամենը—155 դպր.				20,000 ր.	

Սակայն դպրոցական դրամագլխի $^0/_0{}^0/_0$-ն ընդամենը տարեկան հասնում էին միայն 14,592 ր.։

Ի նկատի ունենալով, որ մեր դպրոցական դրամագլուխն, ըստ ինքեան, չնչին մեծութիւն է կազմում և

ցանկանալով հետզհետէ նորա աճեցման նպաստել, ցանկալի համարուեցաւ ստացած տարեկան հասոյթի 20% աւելացնել մշտապէս մայր գումարի վերայ, մինչև որոշ, շօշափելի գումար կկազմուի. այսպիսով տարեկան 3000 ր. յատկացուեցաւ այդ նպատակին, որով մնում էր տրամադրելի գումար միայն 11,592 ռուբլի։

Վերն առաջ բերած ցուցակի մէջ չկան մեր միւս երկու թեմերի, այն է Պարսկաստանի թեմերի խղճուկ դպրոցների ցուցակը. անկախ սորանից քիչ չէ պատահում, որ տարուայ մէջ որ և է անակնկալ պատճառով դիմումներ են լինում Ն. Վեհափառութեան կարօտաւոր դպրոցներին նպաստ տալու խնդրով։ Այս բացերն ի նկատի ունենալով այս ուսումնական տարուայ համար Ն. Վեհափառութեան տրամադրութեան տակ է դրուած 1,592 ռուբ., որով մնացած դպրոցների կարիքների համար մնում է տրամադրելի միմիայն 10,000 ռուբլի։

Այս գումարը համաչափ բաշխման սկզբունք ընդունելով դպրոցների չափի և դրամագլխի քանակի յարաբերականը (10,000 : 155), ստացուեցաւ հետևեալ բաշխման աղիւսակը

1) Երևանի թեմի	70	դպրոցի	համար	4970 ր.
2) Ղարաբաղի »	26	»	»	1846 ր.
3) Վրաստանի »	19	»	»	1359 ր.
4) Ատրպատականի »	12	»	»	852 ր.
5) Բեսարաբիայի »	6	»	»	426 ր.
6) Շամախու »	5	»	»	355 ր.

Որը կլոր թուերի վերածելով իւրաքանչիւր թեմի համար որոշուեցաւ, ըստ այսմ,—

1) Երևանի	թեմ	5000 ր.
2) Ղարաբաղի	»	1900 ր.
3) Վրաստանի	»	1400 ր.
4) Ատրպատականի	»	900 ր.
5) Բեսարաբիայի	»	400 ր.
6) Շամախու	»	400 ր.
Ընդամենը		10,000 ր.

Այս մասին արդէն տեղեկութիւն է տրուած ժամանակին իւրաքանչիւր թեմական առաջնորդի, որպէսզի նոքա ի նկատի ունենալով իրենց թեմերի համար որոշած դրամի քանակը, ըստ իւրեանց հայեցողութեան բաշխեն ամենից աւելի կարօտաւոր դպրոցներին և նոր ցուցակն ուղարկեն Հայրապետական Դիւանին. որպէսզի ժամանակին ուղարկուի դպրոցների հոգաբարձութեան կամ ում որ պէտք է նոցա յատկացրած գումարները։

Սա մի գործ է, որի հետևանքները կերևան այս ուսումն. տարուայ մէջ և եթէ բաշխման աւելի բանաւոր եղանակ ընդ առաջ կգայ, Հոգևոր իշխանութիւնը չի դանդաղի ինքն ևս ընդ առաջ գնալու դորան, ի նկատի ունենալով միմիայն դպրոցական շահերը և ամենից աւելի կարօտ դպրոցներին օգնած լինելու ձգտումը։

Ցանկալի կլինէր, որ մեր դպրոցական հոգաբարձութիւնները, որոնք յիրաւի կարօտ են և որոնց դպրոցներն առանց դպրոցական դրամագլխի նպաստի չեն կարող կեանք ունենալ, ուսումն. տարուայ վերջը դիմեն իրենց թեմական առաջնորդներին, որպէսզի վերջիններս ևս կարող լինեն ժամանակին լրիւ ցուցակ ներկայացնել կենդրոնին՝ բաշխման գործը դիւրացնելու և արագացնելու համար։